



Սայաթ Նովա

Աշխարհեմեն բեգարիլ իմ

Աշխարհեմեն բեգարիլ իմ . . .

Աշխարհեմեն բեգարիլ իմ, էլ բերնումբս համ չըկայ, չէ՛,
Թառամիլ է սըրտիս վարդըն, սափա, զօղ ու դամ չըկայ, չէ՛,
Ամեն մարդ ի՛րան է քաշում, դարդիման համդամ չըկայ, չէ՛,
Բոլորն դամքաշ ին դառի՝ ուրախ սիրտ անգամ չըկայ, չէ՛:

Դառն խօսքով սիրտըս խուցից՝ վաղի ձեռնե՛մեն գուլամ յիս,
Դօստիրըս դուշման ին դառի, եաղի ձեռնե՛մեն գուլամ յիս,
Մեկ չէ, էրկու չէ՝ աշխարհում շատի ձեռնե՛մեն գուլամ յիս,
Էյթիբարըն վիրացիլ է, ասկ ու բարեկամ չըկայ, չէ՛:

Է՛յ աղալաթ հուքմի-հե՛քիմ, սուչըս ի՞նչ է, ա՛սա ինձի,
Վուր հագցըրիք իմ չուգեցած սիվ ու սուգ լիբա՛սըն ինձի,
Խընցըրեցիք անմիղ տիղըն էս աղուի թասըն ինձի.
Հոգուդ մեջ՝ ի՛նսափ, սըրտումբդ շընուք ու քարամ չըկայ, չէ՛:

.....

Թե ռուխսաթ տան՝ սիրտըս բանամ, կու տեսնիք՝ դարդիրըս ծով ա,
Դօվրանեմեն դուս ին գըցի, իմ տիղըս բըռնողըն ո՞վ ա,
Ասում ին՝ տարքըդ թամամից, լա՛ց ու վո՛ւղբա, Սա՛յաթ-Նովա,
Հեյ վա՛խ, էլ ձեռիս քամանչա, մեջլիսումբն ջամ չըկայ, չէ՛: